ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը վավերացնելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-1375-25.06.2026-ԱՌՀ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-1375-25.06.2026-ԱՌՀ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չի պարունակում:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջների տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարող՝ Մ. Սարգսյան (հեռ.՝ 011-513-248)
01.07.2026թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարող՝ Մ. Սարգսյան (հեռ.՝ 011-513-248)
01.07.2026թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է վավերացնել 1996 թվականի մայիսի 3-ին ստորագրված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը՝ կից հայտարարությամբ (ըստ որի՝ համաձայն Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 3-րդ Մասի Ա հոդվածի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերի՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է կապված լինել Խարտիայի 11-րդ հոդվածով:):

Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության տեղեկատվության «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

(հեռ.՝ 011 513-668)

26.06.2026թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Նախագծով առաջարկվում է վավերացնել 1996 թվականի մայիսի 3-ին ստորագրված «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 11-րդ հոդվածը»՝ մարդու իրավունքների արմատական պաշտպանության և ազատության ամրապնդման միջոցով Եվրոպական խորհրդի անդամների միջև ընդհանուր ժառանգության հանդիսացող

գաղափարների և սկզբունքների պահպանմանը և իրագործմանը, ինչպես նաև իրենց տնտեսական և սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության կողմից խարտիան (այսուհետ՝ Խարտիա) ստորագրվել է 2001թ. հոկտեմբերի 18-ին և ուժի մեջ է 2004թ. մարտի 1-ից:

Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում առողջության պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման ապահովմանը՝ պետական և մասնավոր կազմակերպությունների ներուժի ներգրավմամբ ձեռնարկելով համապատասխան միջոցներ, կընձեռի նոր հնարավորություններ առողջության համար վնասակար պատճառները վերացնելու ուղղությամբ:

Խարտիայի 11-րդ հոդվածի վավերացման արդյունքում հնարավորինս կկանխվեն համաճարակային, տեղական (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ՍԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Սարգսյան (հեռ.՝ 011 513-270, 12-70)
03.07.2026թ.